ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

20.09.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ 739-Ա

ՌՈՒԲԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ԹԻՎ 1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 706-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2022 թվականի սեպտեմբերի 13-ի N՝ Կ-13092022-09-0023 որոշումը և նկատի ունենալով Ռուբիկ Սահակյանի կամովին հողամասից հրաժարվելու մասին 2022 թվականի սեպտեմբերի 15-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի, Գորիս քաղաքի Արցախյան խճուղու թիվ 1/2 հասցեում գտնվող Ռուբիկ Սահակյանին պատկանող հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,012հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկ. 09-003-0234-0004) ճանաչել համայնքային սեփականություն:
2. Ուժը կորցրած ճանչել Գորիս համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի «Ռուբիկ Սահակյանին պատկանող Գորիս համայնքի Գորիս քաղաքի Արցախյան խճուղու թիվ 1/2 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» թիվ 706-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2022/20/09
Ք.Գորիս